

Երևանի «Հայբուսակ» համալսարանի կրթության որակի ապահովման կենտրոնի աշխատանքների նկարագրությունը

2008 թ-ին Հայբուսակ համալսարանում ստեղծվել է կրթության որակի ապահովման կենտրոն (հետագայում՝ Որակի կենտրոն), որը համակարգում և վերահսկում է կրթական գործընթացի բարելավման և որակի բարձրացման աշխատանքները: Մեր նպատակն է՝ բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և համապատասխանեցնել այն միջազգային չափանիշներին: Իր գործունեության ժամանակահատվածում Որակի կենտրոնը մեծապես նպաստել է Բոլոնիայի գործընթացի ներդրմանը մեր համալսարանում: Մասնավորապես, կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Առաջին աշխատանքն է եղել համալսարանի վարչական աշխատակազմի վերապատրաստումը, որի ընթացքում անց են կացվել հարցումներ՝ թե որքանով են աշխատակիցները պատկերացնում Բոլոնիայի գործընթացի առանձնահատկությունները, ինչպես են մտածում իրականացնել Բոլոնիայի պահանջները, ինչ խնդիրներ են տեսնում իրենց առջև: Վերհանված խնդիրների բացահայտման արդյունքում ձևավորվեցին վերապատրաստման ուղղությունները, այն է՝
- ✧ համապատասխանեցնել ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը և ՄԿԾ-րը միջազգային չափանիշներին,
- ✧ վերապատրաստել բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ըստ Բոլոնիայի պահանջների,
- ✧ մանկավարժներին զինել ժամանակակից դասավանդման մեթոդներով և տեխնոլոգիաներով,
- ✧ հստակեցնել և կոնկրետացնել ուսուցման նպատակները՝ դասապրոցեսն ավելի արդյունավետ դարձնելու համար
- ✧ բարձրացնել լսարանում ծախսվող ժամանակի արդյունավետությունը՝ այն օգտագործելով ի շահ ուսանողի:

- ✓ Վերապատրաստման ընթացքում բուհի աշխատակիցները.
- ✧ ծանոթացան Բոլոնիայի պահանջներին,
- ✧ ստացան բոլոր միջազգային և հանրապետական՝ նախարարության կողմից ստեղծված փաստաթղթերը,
- ✧ ներգրավվեցին ինտերակտիվ թրեյնինգներին, որոնց միջոցով իրականացվեց աշխատանքների առաջին փուլը:

- ✓ Հաջորդ փուլում սկսվեցին կրեդիտային համակարգի մշակման և ներդրման

աշխատանքները համալսարանում, որի համար ևս իրականացվեց վերապատրաստում և ձեռնարկվեց նոր, կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան ուսումնական պլանների ստեղծումը: Վերանայվեցին բուհում գործող առարկայական ծրագրերը, ինչի համար մշակվեց միջազգային չափանիշներին համապատասխանող՝ գործիմաց (կոմպետենտ), արդյունավետ և պրոդուկտիվ առարկայան ծրագրերի կազմակերպման ձև, որը տրամադրվեց բոլոր ամբիոններին: Արդյունքում այսօր համալսարանում դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերը հիմնականում համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Չնայած դրան, համալսարանում մշտապես իրականացվում է ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և ՄԿԾ-րի կրթական չափորոշիչների պարբերական վերանայում և կատարելագործում՝ դրանք միջազգային չափանիշներին և տեղի կրթական խնդիրներին շարունակաբար համապատասխանեցնելու նպատակով:

- ✓ Համալսարանում ուսուցման որակի բարձրացման նպատակով մշտապես իրականացվում է մանկավարժական գործընթացի դիտարկում և դասալսումներ, արդյունքների քննարկում ամբիոնների, դեկանատների, ռեկտորատի և համալսարանի Որակի կենտրոնի կողմից:
- ✓ Բուհական ուսուցման որակի ուսումնասիրության նպատակով անց են կացվել նաև հարցումներ ուսանողների և շրջանավարտների շրջանում՝ վերհանվել են ուսանողների կարիքները և ցանկությունները, որոնց վերլուծության հիման վրա ևս մշակվել են համալսարանի արդի կարիքները և կատարվելիք աշխատանքները :
- ✓ Ուսուցման որակի բարձրացման նպատակով նաև իրականացվել են բուհի դասախոսների վերապատրաստումներ, որոնց ընթացքում դասախոսները ծանոթացել են ուսուցման ժամանակակից պահանջների, նոր մեթոդների և տեխնոլոգիաների հետ, առաջարկվել է հրաժարվել դասավանդման միակ ավանդական ձևից՝ դասախոսությունից, և փորձել նոր ձևեր ներդնել մասնկավարժական գործընթացի մեջ:
- ❖ Որակի կենտրոնը մշակել և առաջարկել է ուսուցման ավանդական թելադրություն-դասախոսություն ձևը փոխարինելու մի շարք ինտերակտիվ տարբերակներ, որոնց մեծ մասն այժմ հաջողությամբ կիրառվում է բուհի մասնագետների կողմից էլ. ծրագրեր, online դասընթացներ և այլն:
- ❖ Ուսուցման նոր ձևերի ներդրման նպատակով նախ դասախոսներին առաջարկվել է մշակել, իսկ եթե ունեն մշակված՝ գրի առնել իրենց հեղինակային դասընթացները և տրամադրել դրանք ուսանողներին կամ էլեկտրոնային տեսքով, կամ թղթի վրա: Բացի այդ, դասախոսներին առաջարկվել է տպագրել ոչ միայն այդ դասընթացները համալսարանի ծախսերով, այլև վճարել հեղինակներին կատարված աշխատանքի համար:
- ✓ Ուսուցման նոր ձևերին և տեխնոլոգիաներին ծանոթանալու և դրանք համալսարանում

ներդնելու նպատակով բուհի մի խումբ աշխատակիցներ 2009 թվականից ընդգրկվել են “Institution Building and Human Resource Develeopment for eLearning in the Caucasus” ծրագրի մեջ, որը Հայաստանում և Անդրկովկասի այլ երկրներում կազմակերպել էր Գերմանական Inwent Capacity Building International (Federal Ministry for Economic Cooperation, Germany) կազմակերպությունը, իսկ աշխատանքները իրականացնում են ավստրիական Global Campus կազմակերպության մասնագետները: Արդյունքում համալսարանի մասնագիտական խմբի կողմից ստեղծվեց էլեկտրոնային դասընթաց, որը հաջողությամբ ներդրվեց կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, իսկ արդյունքների մասին զեկուցվեց միաջգգային գիտաժողովում, որը տեղի ունեցավ Թբիլիսիում:

- ✓ 2011-2012 թվականների ընթացքում Որակի կենտրոնի կողմից ուսումնասարվել են ուսուցման արդյունքների գնահատման եվրոպական չափանիշները և մշակվել է գնահատման նոր համակարգ, որը հաշվի է առնում մի շարք նախկինում անտեսված գործոններ, ինչպիսիք են, օրինակ, ուսանողի ակտիվությունը դասապրոցեսի ժամանակ, նրա ինքնուրույն, ստեղծագործական և արտալսարանային աշխատանքը, հաճախումները և այլն: Օբյեկտիվ և թափանցիկ գնահատման համակարգի ներդրման նպատակով իրականացվել են բուհի վարչակազմի և բոլոր դասխոսների վերապատրաստումներ, որոնց ընթացքում ներկայացվել է ուսուցման արդյունքների գնահատման նոր համակարգը, տրամադրվել են բոլոր անհրաժեշտ փատաթղթերը (մեր կողմից մշակված թափանցիկ և օբյեկտիվ գնահատման սանդղակ/Rubric և գնահատման եվրոպական չափորոշիչները ուսանողների համար, ուսուցման արդյունքների ստուգման ձևերի ցանկը ամբիոնների համար, տեղեկագրերի և ամփոփիչ գնահատականների սանդղակները դեկանատների համար և այլ ներքին շրջանառության փաստաթղթեր), կատարվել է բացատրական աշխատանք համալսարանում գնահատման նոր համակարգի ներդրման արդյունավետության և անհրաժեշտության ուղղությամբ: Այժմ գնահատման նոր համակարգը ներդրված է բուհում, և կատարվում են ուսումնասիրություններ այդ համակարգի արդյունավետության վերաբերյալ (իրականացվում է գնահատման վերահսկողություն, կատարվում են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջաններում և այլն):
- ✓ Ձևավորվել են համագործակցություններ հանրապետության և արտերկրի մի շարք բուհերի հետ, որոնց թվում են՝ Իսպանիայի Մենեջմենտի Բարձրագույն դպրոցը, Էստոնիայի “Tallinn Health Care College”-ը, Շվեյցարիայի Բաց համալսարանը, Վարշավայի Բիզնես համալսարանը, Վարշավայի հումանիտար համալսարանը, Ամերիկյան միջազգային Բիզնես դպրոցը և Ի.Մ.Սեչենովի անվան Մոսկվայի պետական բժշկական համալսարանը:
- ✧ Համալսարանի իրավատնտեսագիտական ֆակուլտետը համագործակցում է ՄԱԿ-ի գրասենյակի հետ՝ Իրավաբանական Կլինիկայի հիմնադրման և զարգացման ծրագրի շրջանակներում:
- ✧ Հայբուսակ համալսարանը բազմիցս մասնակցել է կրթությանը նվիրված միջազգային և

հանրապետական ցուցահանդեսներին:

- ❖ Համալսարանը համագործակցում է Erasmus+ և DAAD գրասենյակների հետ և մասնակցում է տարատեսակ դրամաշնորհային ծրագրերին.
- ✓ Որակի կենտրոնի համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ տրամադրվել է կահավորված տարածք՝ հազեցած անհրաժեշտ տեխնիկայով:

Որակի կենտրոնի աշխատողների գործառույթները՝

Որակի կենտրոնի տնօրեն.

- ✓ մշակել, իրականացնել և մշտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցել դրանց արդյունքների մասին, սահմանել որակի ներքին չափանիշներն և չափորոշիչներն՝ ընդունված միջազգային պահանջներին համահունչ,
- ✓ մշակել ԵՀՀ-ի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- ✓ համակարգել և վերահսկել ՈԱ գործընթացների իրականացում ԵՀՀ-ի բոլոր ստորաբաժանումներում,
- ✓ կազմակերպել վերապատրաստումներ ինչպես համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, այնպես էլ ուսանողների համար,
- ✓ կազմակերպել և իրականացնել ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնազնադատման գործընթացը,
- ✓ համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և միջազգային այլ նմանատիպ գործակալությունների հետ,
- ✓ ապահովել կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- ✓ պատրաստել ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման համար, ինչպես նաև համակարգել և աջակցել դրանց իրականացմանը ԵՀՀ-ի բոլոր ստորաբաժանումներում,
- ✓ կազմակերպել կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան, ստուգել նոր և վերանայված կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթները,
- ✓ մշակել և իրականացնել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ մշտադիտարկման գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) և ընթացակարգերը,
- ✓ համագործակել ԵՀՀ-ի գիտական խորհրդի և ֆակուլտետների գիտական խորհուրդների ՈԱ մշտական հանձնաժողովների հետ և աջակցել նրանց աշխատանքներին:

Որակի կենտրոնի տնօրենի տեղակալ.

- ✓ մշակել ԵՀՀ-ի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը,
- ✓ կազմակերպել վերապատրաստումներ ինչպես համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, այնպես էլ ուսանողների համար,
- ✓ իրականացնել համապատասխան զեկույցի պատրաստումը և հաջորդող գործողությունների պլանավորումն ու վերահսկումը,
- ✓ համակարգել Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,
- ✓ համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և միջազգային այլ նմանատիպ գործակալությունների հետ,
- ✓ պատրաստել ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման, հաստատման, ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման համար, համակարգել և աջակցել դրանց իրականացմանը ԵՀՀ-ի բոլոր ստորաբաժանումներում,
- ✓ համակարգել ԵՀՀ-ի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատման և հավատարմագրման գործընթացները,
- ✓ իրականացնել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ մշտադիտարկման գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) և ընթացակարգերը:

Որակի կենտրոնի տնօրենի տեղակալ (ՄԿԾ-րի գծով).

- ✓ ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը,
- ✓ իրականացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման համար նախատեսված համապատասխան զեկույցի պատրաստումը ՄԿԾ-ների մասով,
- ✓ համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հետ և միջազգային այլ նմանատիպ գործակալությունների,
- ✓ ապահովել կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին ,
- ✓ պատրաստել ՈԱ ընթացակարգեր կրթական ծրագրերի մշակման և պարբերական վերանայման համար,
- ✓ կազմակերպել կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացները՝ ՈԱ ընթացակարգերին համապատասխան:

Որակի կենտրոնի հարցումների պատասխանատու.

- ✓ ապահովել ՈԱ մոնիթորինգի իրականացումը (հարցումների, ֆոկուս-խմբերի) անցկացումը, դրանց գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, և արտաքին փորձագետների գործուն

մասնակցությունը, արդյունքների մշակումը, ամփոփումը,

- ✓ համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և միջազգային այլ նմանատիպ գործակալությունների հետ,
- ✓ մշակել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմը՝ հարցաշարեր, ֆոկուս-խմբերի ուցեցույցներ և այլն:

Որակի կենտրոնի մասնագետ.

- ✓ համակարգել և վարչական աջակցություն տրամադրել ՈԱ գործընթացների իրականացմանը ԵՀՀ-ի բոլոր ստորաբաժանումներում,
- ✓ մասնակցել ինստիտուցիոնալ հավատարմագրման համար նախատեսված համապատասխան զեկույցի պատրաստմանը,
- ✓ համակարգել Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ,
- ✓ համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և միջազգային այլ նմանատիպ գործակալությունների հետ,
- ✓ օժանդակել ԵՀՀ-ի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատմանը,
- ✓ կազմակերպել և իրականացնել որակի կենտրոնի գործավարությունը,
- ✓ կազմակերպել որակի կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումները:

Այսպիսով որակի կենտրոնը շարունակում է իր աշխատանքը կրթության որակը բարելավելու ուղղությամբ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին: